որ նեղքի չանէն հոխայ մի ջուր կու տանէր։ Սիրամարգ[1] շատ տեսաք։ Կայր կով մի՝ որն 9 ոտք ունէր և ուսն որպէս ըղտու էր։ Տեսաք սպիտակ ագռաւ մի, որ թագաւորի մասխարան էր, մարդոյ պէս կու խօսէր, և շան պէս կու հաչէր։ Բազայ, թաւուղ դուշի, հնդատանայ կատու, սպանիու սամսար, ջրի շուն, զէրէթի կատու, ջրի կով, հապաշի ոզնիք, տավայ դուշի[2] և այլ կերպ կերպ կենդանիք, որ ոչ էաք տեսեալ՝ տեսաք. ոչ լեզուաւ պատմել կուգայ, և ոչ գրով իմացնել. ոչ ասել կուգայ և ոչ գրել։

Դարձեալ այսչափ որ հաւուղներն լիք էին, ամէն 126 հաւուղ էր. այն ա հաւուղն՝ որ նաւեր կու բանին վերան, շրջապատն շատ ընդարձակ է. ամէնու ջուրը քաշովի է, որ գիշեր ցերեկ 60 ձի ը դոլապով համաշայ ջուր կու քաշէն. այն ջրի ա հոխան կէս ղուռուշ խարջ ունի։

Դարձեալ տեսաք զթագաւորի հայ ուտելն։ Ինքն և կինն 'ի միասին կու նստին. թագաւորն յաջ դիին, և կինն 'ի ձախ դիին. տիվանխանայի յաջ դիին թագաւորի տղայն և իւր կինն. թագաւորի դիմաց՝ եղբայրն և իւր կինն. ձախ դիին՝ հօր եղբօր որդին, և կամ հօրեղբօր աղջիկն։ Իսկ թագաւորն՝ սեղանի վերին դիին կու նստի. չորս կողմ սեղանին՝ որչափ մեծամեծք կան, վեզիր, փիրիյոլ[3], մարքէդ, ճինթուլունք, եպիսկոպոսք, և այլ մեծամեծք շուրջ զսեղանովն կու կանգնին, թէ կամի՝ կու խօսի ընդ նոսա։

Եւ կերակուրն՝ որ կու բերեն, յառաջն սկսանի ջրի կերակուր, միս խաշած. յետոյ խորոված միս. յետոյ մեծ թռչունք. յետոյ փոքր թռչունք. յետոյ շէքէր լէմէյով էմիշտայ[4]. շէքէրլէմէ չոր. յետոյ վերջն պանիր. և ամենայն կերպ ուտելեացն լինի աւելի քան զ55 կամ 60 թիւրլիւ։

Իսկ Վերսալիա քաղաքն է մեծ և վայելուչ որսի տեղ. և չորս կողմն է լեռն. և ինքն է դաշտ և բարեձև. և ունի գեղեցիկ շինուածք. և մեծամեծ սերայներ. զոր Աստուած վայելել տայէ թագաւորին և ամենայն քրիստոնէից. և 'ի ցնծութիւն տառապեալ ազգիս հայոց։

Եւ տեսաք զՄիսէօ[5], մին հալեոր կարմիր մարդ. մինչ օր Դոֆինին, որ տղայ է եղեր իւրն, այս վերոգրեալ հաւուղին և շատերբ-

[1] В скобках курсивом: *թաւուղ խուշի.*

[2] В скобках курсивом: *ջայլամն.*

[3] Курсивом, не в скобках.

[4] В скобках, не курсивом: *մրդեղն.*

[5] Следует многоточие.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան